

Հեռախոսային բանկային ծառայություն

Պարզ և ապահով

Ընդամենը մեկ հեռախոսազանգ և Ձեր գործարքները կիրականացվեն առավելագույնս արագ և ապահով կերպով:

Ձեր բանկային գործարքներն իրականացնելու պարզ և ապահով ճանապարհ: Պարզապես զանգահարեք +374 (60) 655 000 և հետևեք ձայնային հրահանգներին, մինչև կմիանաք Հեռախոսային կենտրոնի աշխատակիցներին:

Մենք աշխատում ենք շուրջօրյա, շաբաթը 7 օր և առանց հանգստյան օրերի: Ձանգահարեք ցանկացած վայրից, ցանկացած ժամի, և ձայնային հրահանգները կօգնեն Ձեզ միանալ Հեռախոսային կենտրոնի աշխատակիցներին:

Գրանցում

Հեռախոսային կապի միջոցով առաջարկվող բանկային ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է այցելել Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի որևէ մասնաճյուղ և ստորագրել «Հեռախոսային կապի միջոցով ներկայացված հանձնարարականների կատարման համաձայնագիր»:

Անվտանգություն

Բոլոր հեռախոսազանգերը, առանց որևէ բացառության, կձայնագրվեն և կպահվեն էլեկտրոնային տարբերակով՝ ելնելով անվտանգության նկատառումներից: Ինչպես նաև Ձեր բոլոր գործարքները/գործառնությունները կգրանցվեն Ձեր հաշվի պարբերական քաղվածքում: Ձեր գործարքները կիրականացվեն միայն Բանկի աշխատակցի կողմից Ձեր անձը հաստատելուց հետո:

Ծառայության սակագներ

Ծառայության գրանցում

- Անհատներ, ներառյալ անհատ ձեռներեցներ - 1,000 ՀՀ դրամ
- Իրավաբանական անձիք - անվճար

Սպասարկում – անվճար

Տրամադրվող ծառայություններ¹

Հաշիվներ և գործառնություններ	
Հաշվի մնացորդի հարցում	✓
Գործարքների մանրամասների հարցում	✓
Պարբերական վճարման հանձնարարականի ձևակերպում*	✓
Վարկի հերթական վճարման և վարկային հաշվի մնացորդի հարցում	✓
Փոստային/էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարների փոփոխում*	✓

Փոխանցումներ և վճարումներ*	
Փոխանցումներ Ձեր հաշիվների միջև	✓
Փոխանցումներ ՀՀ տարածքում գործող բանկերին ²	✓
Միջազգային փոխանցումներ ²	✓
Կրեդիտ քարտի վճարում	✓
Վարկի մարում	✓

Հարցումներ	
Ավանդների տոկոսադրույքների հարցում	✓
Արտարժույթի փոխարժեքների հարցում	✓
«Էլչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	✓

Այլ ծառայություններ*	
Քարտի ակտիվացում	✓
Քարտի կասեցում, քարտային գործարքի հետազոտման հրահանգի ներկայացում	✓
Պարբերական վճարման հանձնարարականի ձևակերպում*	✓
Քարտի վերաթողարկում	✓
Քաղվածքի/տեղեկանքի պատվիրում	✓
Արժեթղթերի առքի և վաճառքի հանձնարարականների ներկայացում (բրոքերային ծառայություններ) ³	✓

Կարևոր նշում

Բանկը կարող է վաղաժամկետ դադարեցնել Հաճախորդի հետ կնքած հեռախոսային բանկային ծառայությունից օգտվելու պայմանագիրը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հեռախոսային բանկային ծառայության միջոցով գործարք չի կատարվել:

¹ Որոշ գործարքների դեպքում, որոնք հնարավոր չէ իրականացնել ստանդարտ աշխատանքային ժամերից դուրս, մենք կընդունենք Ձեր հանձնարարականը և կիրականացնենք Ձեր գործարքը առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում՝ բացառությամբ քարտի կասեցման, որը կկատարվի անհապաղ:

² Մեկ օրվա ընթացքում կատարվող գործարքների ընդհանուր սահմանաչափը չի կարող գերազանցել 10,000 ԱՄՆ դոլարը կամ համարժեքը այլ արժույթով:

³ Բրոքերային ծառայությունները տրամադրվում են Հաճախորդի և Բանկի միջև բրոքերային ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայության դեպքում:

* Ծառայությունները կիրառելի չեն կազմակերպությունների համար:

Ժամանակի և գումարի կրկնակի խնայողություն

Օգտվեք արտոնյալ սակագներից՝ նշված ծառայությունները հեռախոսային բանկային ծառայությունների միջոցով իրականացնելիս

Ծառայություն	Գործող սակագին	Արտոնյալ սակագին
Լրացուցիչ հաշվի բացում (միայն ինտերնետային բանկային ծառայության միջոցով)	3,000 ՀՀ դրամ	անվճար
ՀՀ դրամով փոխանցումներ Հայաստանում	300 ՀՀ դրամ	անվճար
Բանկոմատային քարտի վերաթողարկում	3,000 ՀՀ դրամ	անվճար ¹
Արտարժութային փոխանցումներ (ԱՄՆ դոլարով և Եվրոյով)	0.3% (Նվազագույնը 6,000 ՀՀ դրամ)	0.1% (Նվազագույնը 6,000 ՀՀ դրամ)
Հաշվեկշռի հաստատման/բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ	5,000 ՀՀ դրամ*	1,000 ՀՀ դրամ ^{2*}
Բանկային հաշվից քաղվածքի/գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում 6 ամիս և ավել վաղեմության դեպքում	3,000 ՀՀ դրամ*	1,000 ՀՀ դրամ ^{3*}

¹ Վերաթողարկված բանկոմատային քարտը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

² Տեղեկանքը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային օրվա ընթացքում:

³ Քաղվածքի/գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:

* Ներառյալ ԱԱՀ

Թարմացվել է՝ 12/01/2019 15:00